

Լ. Մելիխոբ-Քեկ

ՀՍՍՌ ԳԱ քրթակից-անդամ

VII ԴԱՐՈՒ ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՍ

(ԱՏԵՆԻ ՍԻՈՆ)

Հայերեն հնագույն արձանագրությունները մինչև VII դարը՝ դեռևս ի մի հավաքած չեն: Սրանց մասնակի ամփոփումը ներկայացրած է Կ. Կոստանյանի¹ և Ե. Հովսեփյանի² համապատասխան զործերում: Իսկ 13-ի չափ արձանագրությունների «համարաբարձը» (բառերի և անունների լրիվ ցանկը) հրատարակել է Հ. Օրբելին³ Վերջինումս հատկապես նկատի են առնված Ալաթի, Արուճի, Ատենի, Բազավանի, Բազարանի՝ զույգ, Մաստարայի՝ զույգ, Մրենի, Նախճավանի, Հոփսիսիմի տաճարի՝ զույգ և Թալինի վիճագրությունները:

Այս շարքին մենք հնարավոր գտանք ավելացնել 3 արձանագրություն ևս, այն է՝ Ավանի, Ազրյամանի և Օձուն-Ուզունլարի, որոնց մասին համառոտ տեղեկություն տվինք մեր հատուկ հոդվածում⁴:

Նշած արձանագրություններից մեկը Հայաստանի սահմաններից դուրս է գտնվում, այն է՝ Գորու շրջակայքում հայտնի Ատենի Սիոն կոչված հռչակավոր տաճարի հարավային պատի վրա:

Ատենի Սիոնը, ինչպես ապացուցված է, կառուցվել է VII դարում, իբրև պատճեն կամ ընդօրինակում Սցիսթայի բլրի Սուրբ Խաչի Նմանապես ապացուցված է, որ Ատենի Սիոնը կառուցվել է հայ ճարտարապետի ղեկավարությամբ և հսկողությամբ, որի անունը անմահացրած է հարավային պատի շինարարական արձանագրության մեջ⁵: Ընդսմին, միանգամայն հերքված է և հանգուցյալ Իվ. Զավախիշվիլու ենթագրությունը, իբր

¹ Կ. Կոստանյանց—Վիճական տարեգիր. ՍԳԲ, 1913, էջ 1—2:

² Գաբեզիճ վ. Հովսեփյան—Գրչության արվեստը հին հայոց մեջ, Վաղարշապատ, 1913, էջ 5—10:

³ *И. Орбели*—Указатель слов и имен к 13 армянским надписям VII века. «Христ. Восток», т. III, 1915, стр. 95—100:

⁴ Լ. Մելիխոբ-Քեկ—Հայաստանի VII դարու արձանագրություններից. «ՍՍՌԾ Գիտ. Ակադ. Հայկական Ֆիլիալի Տեղեկագիր», 1941 թ., № 9, էջ 64—66 = «Գրական հանդես» (Թբ.) 1941 թ. № 2, էջ 50—51:

⁵ *И. Джавахов*—К вопросу о времени построения грузинского храма в Аteni по вновь обследованным эпиграфическим памятникам. «Христ. Восток», т. I, 1913, стр. 277—297:

թե Ատենի Սիոնը բազիլիկայից է վերակառուցված կենտրոնա-գմբեթային տաճարի (տետրակոնքի)։¹

Դեռ ավելին: Մեղ վաղուց (1920 թ.) վիճակվեց ստուգել Ատենի Սիոնի վիմագրությունները, որոնց թվում հայտնադործվեց սի քանի հայերեն արձանագրություն, սրանց թվում մեկը նույնիսկ գմբեթի վրա, որոնք աստճարի կառուցման հետ են կապված: Ճիշտ է, Ատենի արձանագրություններից մի քանիսն արդեն նշված էին *M. Brosset*-ի կողմից դեռևս 1851 թվին:² սակայն 1920 թ. մեր հետազոտության հիման վրա հնարավոր եղավ Ատենի տաճարի հայերեն արձանագրությունների շարքը զգալիորեն անհեցնել, որ և նույն թվին հրատարակեցինք մեր գրարարի ծաղկաքաղում:՝

Սակայն փաստը մնում է փաստ: Ատենի Սիոնի բոլոր պատերի և նույնիսկ գմբեթի վրա փորագրած հայերեն արձանագրությունները միաբերան ապացուցում են, որ տաճարը կառուցող ամբողջ բրիգադան հայ ճարտարապետից ու մի շարք շայ վարպետներից է եղել բաղկացած, որոնց միջև նույնիսկ աշխատանքի բաժանման որոշ սկզբունք է եղել կիրառված:

Ահա և Ատենի Սիոնի տաճարի զրսի պատերի VII դարու հայերեն արձանագրությունների շարքը:—

1

Տ պատի Օ խորանում

1. +ԵՍ ԹՈԴՈՍ[ԱԿ] ԵՒՆՈՂ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԷ
 2. [ԳԻՈ]Յ. . .
- «ԵՍ, Թոգոս[ակ], շինող սրբոյ կկեղև[ցւո]յ. . .»

2

Տ արտիցի Օ մասում, Ճրեակոյի սեկ

1. ԱԶԱՐՈՆ
 2. ԳԻՈՐԳ
- «Ահարոն. Գիորգ»:

3

Տ պատի ալեյայի քարերի բարձրամեծղակի վրա

Ա

«Ա[հարոն]»:

4

ՈՍ խորանի N պատի բարձրամեծղակի վրա

1. ՍԱ
2. Թ

¹ Центральнокупольные культовые здания в Цромн и Атени. Альбом чертежей, выполненных по обмерам с натуры архитектором-художником *М. Г. Калашиниковым*. Тифлис, 1917. Գիորգի Չուրխնաշվիլի.—Վրացական արվեստի պատմությունը, վրացերեն, I, Թբ., 1936, էջ 128—136. Շալվա Ամիրանաշվիլի—Վրացական արվեստի պատմությունը, վրացերեն, I, Թբ., 1944.

² *M. Brosset*. Voyage archeologique dans la Georgie et dans l'Armenie, rap. III, SPB 1851, p. 21.

³ Լ. Մելիքսեթ-Քեկ—Ծաղկաքաղ բանից նախնի հայերեն հանդերձ հայ-վրացերեն բարգրավր. հասված առաջին. Թբ., 1920, էջ 112—113.

3. Ո Ա

4. Դ Ո Ա

«Սա[մսոն]. Թողոսա»:

5

Օ պատի սյլեվայլ Բաբեի բարձրաբանդակի վրա

Գ

«Գի[իորգ]»:

6

Վ ճակատի Ն անկյունի բարձրաբանդակի վրա

ԱԱ ԱՄ

«Սա[մսոն]. Ամ[րակուամ]»:

7

Վ պատի սյլեվայլ Բաբեի բարձրաբանդակի վրա

Գ

«Գի[իորգ]»:

8

Իմբեթի Օ կսզի բարձրաբանդակի վրա

1. ԳՐԻ

2. ԳՈՐ

3. Դ

4. ԱՊ

5. Ա

«Գրի[գոր] ր[ապ]ա»:

Այս արձանագրությունների մեջ հիշված անուններից միմիայն երկուսն է, որ կապվում է Աստվածաշնչի (բիբլիական) սյուժեի հետ. այսինքն՝ Սամսոն և Ամրակում: Մնացածը տաճարի շինարար ճարտարպետի ու վարպետների պասպորտիզացիան է ներկայացնում, որով նույնիսկ հնարավոր է որոշել աշխատանքի բաժանման սկզբունքները, օրինակ, որ տաճարի հիմքը կառուցողը և շինարարության ընդհանուր ղեկավարը եղել է Թողոսակը, զմբեթի կառուցողը՝ ոմն Գրիգոր (Գապս), իսկ այլևայլ մասերի (ճակատների, պատերի, խորանների) կառուցողները հիմնականում երկու վարպետ. հյուսիսայինի՝ Ահարոնը և արևելյանի ու արևմտյանի՝ Գիորգը՝ «Գիորգի»-ին, բնորոշում է վարպետի տեղացի՝ վրաստանցի լինելը:

Л. Меликсет-Бек

Ариянские надписи VII века в Грузии

(Атенский Сион)

РЕЗЮМЕ

В статье публикуется свод армянских лапидарных надписей VII века наружных стенах грузинского храма в Атени (Атенского Сиона) в 8 км от гор. Гори. Надписи, большею частью строительные, свидетельствуют не только о постройке храма армянином-архитектором, но и о том разделении труда, которое применено при этой постройке. Выясняется, что общим руководителем по постройке был Тодосак, сотрудниками же его по возведению отдельных фасадов, стен и боковых комнат (междукавных помещений) Агарон и Гиорг, а купола— Григор (Дапс?). Все они, очевидно, были армяне, из них Гиорг местный армянин.